Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՃ-3 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 15.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.-30.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 9 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 25 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 18 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 22 շահառու մասնակցել է կենտրոնում գործող խմբակներին՝
    - ✓ Կինեզոլոգիա,
    - ✓ Երգ,
    - ✓ Պարաթերապիա,
    - ✓ Խոհարարական,
    - ✓ Ձեռքի աշխատանք,
    - ✓ Քննարկումների ակումբ,
    - ✓ Առողջապահական:
    - ✓ Գրական
    - ✓ Հանդիպում քահանայի հետ
  - Ճաշարանի 39 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝
    - Միջոցառում՝ նվիրված տարեցների միջազգային օրվան, Կոմիտասի այգում,
    - Միջոցառում նվիրված տարեցների միջազգային օրվան,
    - Էքսկուրսիա՝Բնության թանգարան, համերգ «art Lunch»-ում,
    - Գոհար եվ «Գոհարներ» երգչախմբի ելույթը Նարեկացի արվեստի միությունում,
    - Էքսկուրսիա՝ Մուսալեռ, Էջմիածին, Սբ.Հռիփսիմե, Մաչանենց տուն, Սբ.Գայանե,

- Էքսկուրսիա Պատմության թանգարան,
- Միջոցառում նվիրված հայկական ավանդական ճաշատեսակին՝ պասուց տոլմային, ծննդյան օրվա նշում,
- Միջոցառում նվիրված ամանորին,
- Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եվ բալետի ազգային ակադեմիական թատրոն, Ա.Խաչատրյան «Սպարտակ» բալետ,
- Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն, ՀՀ կրթության, գիտության եվ մշակույթի նախարարության գեղարվեստական դաստիարակության եվ մշակույթի մանկապատանեկան «Մարիոնետների թատրոն»-ի հաշվետու համերգ,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ա.Խաչատրյանի անվան միջազգային 12-րդ փառատոնի շրջանակներում՝ համերգ նվիրված երեխաների իրավունքների կոնվենցիային,
- Երեվանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տուն, Վահանգ Ստամբոլցյանի անվան երգեհոնային երաժշտության միջազգային փառատոնի համերգ,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ա.Խաչատրյանի անվան միջազգային 12-րդ փառատոնի շրջանակներում՝ համերգ,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կամերային կազմ, Անտոնիո Վիվալդի «Տարվա եղանակները», մենակատար՝ Անուշ Նիկողոսյան,
- Նարեկացի արվեստի միություն, համերգ նվիրված հնաբնակ երեվանցիների ասոցիացիայի հիմնադիր Կառլեն Բաբայանի հիշատակին,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբ, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ Կ.Ջենքինս սիմֆոնիկ աղիմեոս,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ, Դվորժակի 9-րդ սիմֆոնիա,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբ, Ա.Խաչատրյանի անվան 12-րդ միջազգային փառատոնի հերթական համերգ,
- Ա.Խաչատրյան համերգասրահ, Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբ, Ա.Խաչատրյանի անվան 12-րդ միջազգային փառատոնի փակման համերգ:

- 12 շահառու (շարունակական) օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**
Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Նվիրված տարեցների միջազգային օրվան, Կոմիտասի այգում (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/v/1As6Vp6hxf/),
- Նվիրված տարեցների միջազգային օրվան (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/v/1AkYEQptSa/),
- Էքսկուրսիա՝ Բնության թանգարան, համերգ «art Lunch»-ում (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/share/p/1HBTwFrWCV/),
- Գոհար եվ «Գոհարներ» երգչախմբի ելույթը Նարեկացի արվեստի միությունում: (տե՛ս հետևյալ հղմամբ https://fb.watch/wmsy4_S-R0/),
- Էքսկուրսիա՝ Մուսալեռ, Էջմիածին, Սբ.Հռիփսիմե, Մաչանենց տուն, Սբ.Գայանե (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/reel/906784204298984 ),
- Էքսկուրսիա Պատմության թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ https://fb.watch/wmsTmPwxMT/),

- նվիրված հայկական ավանդական ճաշատեսակին՝ պասուց տոլմային, ծննդյան օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ https://www.facebook.com/100064615335914/videos/1082172483584568),
- Միջոցառում նվիրված ամանորին:

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Երևանում գործող բոլոր ճաշարանների խոհարարները մասնակցել են «Առողջ սնուցման հիմունքները» մասնագիտական ինտերակտիվ եռօրյա դասընթացին, որը կազմակերպվել էր The holy digital-ի հետ համատեղ:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի

շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 100/98 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 77 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 25 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 13 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 6 |
| | 40-65 տարեկան | 19 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 57 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 2 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 114 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում<br>Հոգեբանական ծառայություն<br>Բաղնիքի ծառայությունից | 39<br>25<br>12 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «16»12.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)